ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆ

—o—

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

Մոսկվայի հայ ժողովրդի կողմից պատգամաւոր ընտրված է Լաղարեան ճեմարանի ուսուցիչ Կարապետ Կուսիկեան Էջմիածին գնալու և մասնակցելու համազգային յօբելեանին։

—

Թաւրիզի հայ հասարակութեան կողմից Էջմիածին գնալու համար պատգամաւոր է ընտրված վաճառականապետ՝ Զաքարիա Նազարբէգեան։

—

Նոր-Նախիջևանի Աղքատաց Հոգաբարձութիւնը իր վերջին նիստին, որտեղ արծարծեց հայ տառերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յօբելեանի օրերը յարգելու հարցը, որոշեց Էջմիածնի յօբելեանական հանդէսներին ներկայ գտնվելու համար իր կողմից ուղարկել այնտեղ ներկայացուցիչներ՝ հոգաբարձութեան անդամներ Գէորգ քահ. Բելլէ-Շահինեանին և ուս. Սերովբէ Զաթալբաշեանին, որոնք և ներկայ են լինելու դպրոցական ֆոնդը գործադրելու եղանակը պարզելու և սահմանելու համար կայանալիք ժողովին, հոկտեմբերի 10-ին։

Նոր-Նախիջևանի դպրոցական ֆոնդի հանգանակիչ յանձնաժողովի նիստը որոշեց համաձայն տրված առաջնորդի առաջարկին, բոլոր հաւաքված գումարները ուղարկել Էջմիածին՝ այնտեղի յանձնաժողովին։

Նոր-Նախիջևանի թեմական դպրոցի հոգաբարձութիւնը իր վերջին նիստին որոշեց մի ներկայացուցիչ ուղարկել Էջմիածին յօբելեանական հանդէսին ներկայ լինելու և ընտրվեց հոգաբարձու և «Լոյսի» խմբագիր բժ. Գ. Ռէիզեանը։ («Լոյս»)

—

Խմբագրութիւնս ստացաւ «Պատմագիրք Հայոց» աշխատութեան II հատորի առաջին գիրքը, որ պարունակում է Մովսէս Խորենացու պատմութիւնը և որը լոյս է ընծայված հայ տառերի գիւտի և հայ տպագրութեան յօբելեանական տօների առիթով։

Ինչպէս յայտնի է, «Պատմագիրք Հայոց» աշխատութիւնը, որ հրատարակվում է Սուքիաս արքեպ. Պարզեանի ձեռքով, լոյս է ընծայվում ձեռագիրների բաղդատութիւնից յետոյ, որը կատարում են Գ. Տէր-Մկրտչեան, Ստ. Մալխասեանց, Ստ. Կանայեանց, Մ. Արեղեան, Ս. Յարութիւնեան և այլք։

Ներկայ հատորը, որ լոյս է տեսել Մ. Արեղեանի և Ս. Յարութիւնեանի աշխատութեամբ, տպված է Թիֆլիսում և բաղկացած 396 էջից ու արժէ 2 ր.։

«Պատմագիրք Հայոց» աշխատութեան I հատորի առաջին գիրքը պարունակում է

Ղազար Փարպեցու պատմութիւնը, որ արժէ 1 ր., իսկ երկրորդ գիրքը՝ Ագաթանգեղոսինը, որ արժէ 3 ր.։